

վրայեն այսչափ տարուան բեռը կը վերնա: Դու քուն եղիր, ես երթամ պատրաստեմ ամեն բան եւ պետք եղած Յրամանները տամ:

Նոյն գիշեր Գուրգէն Մարդաստանի համար իւր բոլոր կարգադրութիւնքն ըրաւ, բերդերու ամրութեան ամեն հրամաններ տուաւ, բերդակալներ որոշեց, եւ հազարի չափ ընտիրներով երկրորդ օրը Խոսրովի հետ կ'ելէր ուղեւորելու Անձեւացեաց գաւառը:

Բայց երբ իշխանը զբաղմանց եւ իր անհամբերութիւնաց մէջ Վահրիճ կը ձայներ, սպասաւորը, որ կարելոր անձ մը դարձեր էր նորա իւր բոլոր կատարելութեամբք եւ բոլոր պակսութեամբք, նոյն միջոցին Յադամակերտի մօտ նստած էր անխնամ պարտեզի մը մէջ փառաւոր լուսնի գիշերով՝ սեղանի մը առջեւ ուր պատուական կաթաւներու եւ լորամարգներու խորոված եւ Վասպուրականի գերագոյն գինին ու Խլաթի տանձը նաեւ պակաս չէին:

Իւր դիմաց նստած էր երկար եւ խառն մորուք մարդ մը, ում քով սեւ վերարկուն եւ վեղար կը յայտնէին թէ վանքի վարդապետն էր. վասնզի այդ պարտեզը մենաստանինն էր, որուն խեղճուկ եկեղեցին, փլիփլած սենեակները կը վկայէին թէ թշուառ վիճակի մէջ կը գտնուէր շինութիւնը:

Իսկ Վահրիճ, որ յայտնի կ'երեւար թէ զուարթութեան գեղեցիկ աստիճաններուն վրայ էր

— Է՛հ, հայր սուրբ,— կ'ըսէր,— քու վանքիդ ողորմելի կերպարանքը եւ գիեւուոյդ ու պտուղներուդ պատուականութիւնը իրարմէ շատ հեռու են, ես իմ որսերուս այսչափ լաւ ընկերներ տալ չէի կարծեր, երբ զքեզ դռան քով նստած տեսայ:

Յայր Սուրբը, որուն աչքերուն փայլը կը ցցնէր թէ պակաս չէր Վահրիճէ իւր զուարթութեան մէջ, եւ գին վոյն կուժը պարպելու համար մէկտեղ կը ճգներ, ախորժեցաւ իւր գինուոյն գովասանքէն, պատասխանեց.